ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0001-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-036-0084-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Եղեգնուտ, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 10 բնակելի տուն փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

03 հունվարի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0002-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով սեփականատեր Սեյրան Ստյոպայի Սաֆարյանի դիմումը, հիմք ընդունելով «Գասպարի Վեքիլյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև սեփականության վկայականը՝ N 29032022-06-0048՝ ***որոշում եմ***

1. Հաստատել 06-103-0146-0126 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2. Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սեյրան Սաֆարյանին սեփականություն պատկանող 06-103-0146-0126 կադաստրային ծածկագրով 1,0301 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը տարանջատել երկու գույքային միավորների՝ 0,51015 հա մակերեսով հողամասի և 0,5101 հա մակերեսով հողամասի՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի:
3. 06-103-0146-0126 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,51015 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին և վերջինիս վրա առկա շենք շինություններին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 24-26 կմ, 15/1 արտադրամաս հասցե:
4. 06-103-0146-0126 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,5101 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին և վերջինիս վրա առկա շենք շինություններին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 24-26 կմ, 15/2 արտադրամաս հասցե:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 հունվարի 2024, գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

այաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
Հ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0003-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սամվել Խաչիկի Խառատյանի (ծնված 19/08/1959թ.) դիմումը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N 02 որոշումից տրված քաղվածքը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0297-0007 կադաստրային ծածկագրով 0,157999 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

ա). Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սամվել Խաչիկի Խառատյանի (ծնված 19/08/1959թ), Մարետա Հովսեփի Ջուլհակյանի (ծնված 16/12/1962թ), Աննա Սամվելի Խառատյանի (ծնված 18/02/1984թ), Անժելա Սամվելի Խառատյանի (ծնված 13/10/1985թ) և Արեն Սամվելի Խառատյանի (ծնված 17/10/1989թ) սեփականության իրավունքը 06-070-0297-0007 կադաստրային ծածկագրով 0,157999 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0338-0032 կադաստրային ծածկագրով 0,437441 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

ա). Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սամվել Խաչիկի Խառատյանի (ծնված 19/08/1959թ), Մարետա Հովսեփի Ջուլհակյանի (ծնված 16/12/1962թ), Աննա Սամվելի Խառատյանի (ծնված 18/02/1984թ), Անժելա Սամվելի Խառատյանի (ծնված 13/10/1985թ) և Արեն Սամվելի Խառատյանի (ծնված 17/10/1989թ) սեփականության իրավունքը 06-070-0338-0032 կադաստրային ծածկագրով 0,437441 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 հունվարի 2024գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0004-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը աճուրդով վաճառելու մասին «28» դեկտեմբերի 2023 թվականի թիվ 01 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքում «28» դեկտեմբերի 2023 թվականին անցկացված աճուրդում հաղթող ճանաչված Էրիկ Էդիկի Եղոյանին օտարել լոտ 1. 06-102-0012-0046 ծածկագրով 0.334518 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս, աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 475 000 ՀՀ դրամով:
2. Տասնօրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո, երկօրյա ժամկետում Էրիկ Էդիկի Եղոյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը կատարել Էրիկ Էդիկի Եղոյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

05 հունվարի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0005-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՀՈՒԼԻՍ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 677-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Փամբակ համայնքի ղեկավարի 29 դեկտեմբերի 2023 թվականի N 1387-Ա որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝ «495000» (չորս հարյուր իննսունհինգ հազար) բառակապակցությունը փոխարինել «990000» (ինը հարյուր իննսուն հազար) բառակապակցությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

05 հունվարի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 0006-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-թդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 25 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 01 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 25 դեկտեմբերի 2023 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Արտակ Ռուսլանի Էվոյանին վարձակալությամբ 10 տարի ժամկետով տրամադրել լոտ 01. 06-059-0354-0003 ծածկագրով 0,25005 հա գյուղատնտեսական արոտավայր՝ մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 262500 ՀՀ դրամով:

2. Արտակ Ռուսլանի Էվոյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Արտակ Ռուսլանի Էվոյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

05 հունվարի 2024
գ. Փամբակ